

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱԶԳԱՅ ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹԵԱՆ ԴԻԽԱՆԱԳԻՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՐԻԹԻՒՆԸ 1932 ԻՆ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՐԻԹԻՒՆ. — Նախորդ տարին սկսեալ, Մանչուրիոյ մէջ Չին-ճափոնական պատերազմը, Ազգաց Ընկերակցութեան գործունէութեան մեծ մասը գրաւեց: Կացութեան որոշ դադար մը կազմելու համար Լորտ Լիթթընի (Lytton) նախագահութեամբ Յանձնախումբ մը զրկուեցաւ Մայրաքաղաք Արեւելք:

Չինեցու խնդրանքին վրայ և Դաշնագրին 15րդ յօդուածին համաձայն նախ ժողով դուրսբերուեցաւ և ապա արտասովոր Համագումար:

Աջակցութեամբ Մ. Նահանգներու՝ կարելի եղաւ դադարեցնել տալ Նանկայի պատերազմը, ուսկից Մայիսին քաջուեցաւ ճափոն զօրքը:

Մարտ 11ին Համագումարը համաձայնութեամբ յայտարարեց որ ժողովին Անգամ Տեւրութեաները, Ազգաց Ընկերակցութեան և Փարիզի Դաշնագրին հակառակ Մանչուրիոյ նկատմամբ ո՛ր և է կացութիւն չէին կրնար ճանչնալ ինչ ձեւով ալ որ ստեղծուած ըլլար:

Յուլիս 1ին դեռ վեց ամիս երկարաձգեց Յանձնաժողովին պայմանաժամը, հիմնուելով դաշնագրին 11րդ յօդուածին վրայ: Լորտ Լիթթընի յանձնախումբը Հոկտեմբերին կրցաւ ներկայացնել իր քննութեան արդիւնքը: Լիթթընի տեղեկատուութիւնը կը կայանար մասնաւորապէս Մանչուրիոյ մէջ ստեղծուած նոր կառավարութեան շուրջ, և խնդրոյն լուծման երկու ձեւ կ'առաջարկէր:

Նոյեմբերին Յանձնաժողովն ու Համագումարը երկար վիճաբանեցան և միտքան կարծիք յայտնեցին հաշտեցնել երկու պետութիւնները:

ՊՈԼԻԻՒՍՅԻ ԵՒ ՓԱՐԱԿՈՒՍՅԻ ՎԵՃԻ. Պոլիւիայի և Փարակուայի Պետութեանց միջեւ վեճը պատճառ եղաւ այլեւայլ նիստերու: Այն ատեն որ ասոնց ներկայացուցիչները Չեզոք ազգերու հովանաւորութեան տակ Ուաշինկթընի մէջ կը բանակցէին երկուստեք (ոչ յարձաւորական) զինադադարի դաշինք մը կնքելու համար, հիւսիսային Քալիֆորնիոյ զէպքերը տեղի ունեցան: Փարակուայի կառավարութիւնը տարբեր մեկնութիւն մը տալով պատահարներուն՝ կ'առաջարկէր խաղաղ ելքի մը հնարքը գտնելու միջոցները:

Երկու կողմէն ծանուցագրեր փոխանակուեցան: Բազմաթիւ տեղեկատուութիւններ հաղորդուեցան Ազգ. Ընկերակցութեան Դիւանին և ժողովին: Նախագահը հարկ տեսաւ վիճող

ներուն յիշեցնել Դաշինքի նկատմամբ իրենց յանձն առած պարտականութիւնները: Երկուքն ալ հաշտութեան ամէն միջոց ձեռք առնելու բարի տրամադրութիւն յայտնեցին:

Ժողովի անդամներէն կազմուած Յանձնախումբ մը հաղորդակցութեան մտաւ Ուաշինկթընի Չեզոքներու Յանձնախումբին հետ և պատերազմի դադարման ու խաղաղութեան վերահաստատման համար հարկ դատած միջոցները տեղեկացուց:

ՄԵՄԵԼԻ ՎԻՃԱԿԸ. — Լիթթընի պետութիւնը պաշտօնանկ ըրած էր Վարչականի նախագահը և տեղի ուրիշ մը անուանած: Ըստ Գերման կառավարութեան տեսութեան ասիական համաձայն չէր Մեմելի սահմանադրութեան, ուստի Փետրուար 8ին ժողովի նկատողութեան յանձնեց խնդիրը. մինչդեռ Լիթթընիս եւս իրաւացի կը համարէր:

Նախնական քննութեան վերջ, ներկայացուեցաւ Միջազգային Արտագրութեան Միայուն Ատենին: Այս ատենը կը կազմէր Ֆրանսա, Անգլիա, Իտալիա և Ճափոն: Այս պետութիւնները կը մերժէին նմանապէս թէ Մեմելի վիճակին խորհրդարանի լուծումը ըստ օրինի եղած չէր: Ատենը Խորհրդարանի լուծումը օրինաւոր չնկատեց, քանի որ կառավարութեան անուանուած վարչականը Խորհրդարանի վստահութեան քուէն չէր առած: Մինչդեռ ընդունեցաւ թէ ինչ ինչ պարագաներու՝ կառավարչին իրաւունքն էր վարչականին նախագահը պաշտօնէն հանել:

ՖԻՆԱՆՏԱՅԻ ՎԱՐՁՈՒԹԵԱՆ ԲՈՂՈՒՐԸ. Ֆինանսա կը բողոքէր Անգլիոյ պետութեան գէ՛մ թէ պատերազմի ժամանակ իր նաւերը օգտագործած էր: Երկուստեք ապարդիւն վիճաբանութիւններ տեղի ունեցան ժողովին իրաւասու ըլլալուն կամ չըլլալուն վրայ, որով կազմուեցաւ Յանձնախումբ մը: Վերջինս իրաւունք տուաւ Ֆինանսայի տեսութեան, ղեկով երկու զարտուղութիւններ որոնք դատարանի պէտք է երթային:

Վիճարարները իրարու հետ համաձայնութեան բանակցութիւններ սկսան, և ժողովը ուղեց որ արգիւնքն իրեն հաղորդուի:

ԱՆԳԼԵՒՊԱՐՍԻԿ ԴԱՏԱՎԵՃԻ. — Դեկտեմբեր 19 ին ժողովը զբաղեցաւ Պարսիկ

կառավարութեան դիմումովը, որ Անգլիական սիկ ՕՂԵՐ ընկերութեան լուծուելը կ'ուզէր: Դաշնագրին 15րդ յօդուածին վրայ հիմնուած, Անգլիական կառավարութիւնը ժողովին յանձնած էր խնդրոյս լուծումը:

Վիճաբանութիւնները յետաձգուեցան որովհետեւ պարսկական ներկայացուցիչը ժամանակ խնդրեց որպէսզի կարենար հարկ եղած վաւերացութիւնը պատրաստել: Ժողովը, սակայն, վաւերացուց այն հեռագիրը զոր Նախագահը երկու վիճարարներուն պիտի զրկէր որպէսզի խնդրոյն սուր հանգամանք տալէն զգուշանային:

ԼԻՊԵՐԻԱ. — Լիպերիա խնդրագիր ներկայացուց աջակցութիւն ուղեւոր: Կացութիւնն ուսումնասիրելու համար Մոնրովիա քննիչներ զրկուեցան: Ասոնք հարկ տեսան կարեւորութիւնը բարեփոխութիւնը, որոնք սակայն պէտք էին իրագործուել օտար մասնազէններու հովանաւորութեան տակ: Կառավարութեան միջոցներու անբաւականութեան պատճառաւ, գործերն յանձնուեցան ամերիկեան երկու խմբակներու՝ որոնք շահագրգիռութիւն ունէին երկրին զարգացման մէջ: Սակայն սոյն երկու խմբակներուն հետ դեռ համաձայնութիւն գոյացած չըլլալուն, բարեփոխութեանց ծրագիրը դեռ առկաի կը մնայ:

Դարձեալ Լիպերիայի խնդրանքին վրայ, ապստամբ ցեղերը խաղաղեցնելու համար, ժողովը Ուաշ. Մաքքեյզընը զրկեց որ երկու ամիսէն վերագործաւ՝ յաջողութեամբ աւարտելով իրեն յանձնուած փափուկ պաշտօնը:

ԶԻՆԱՓՈՒԹԵԱՆ ԺՈՂՈՎ

Փետրուար 2ին սկսաւ Հենտըրսընի նախագահութեամբ: Եւրոպայի պետութեանց ներկայացուցիչներն հաւաքուած էին, որոնցմէ եօթը մաս չէին կազմեր Ազգաց Ընկերակցութեան:

Ժողովը զինամիութեան նկատմամբ փորձագէտներու ընդհանուր կարծիքն ուղեց: Յանձնաժողով մը կազմեց ուսումնասիրելու և կազմաւորելու համար եղած առաջարկներն ու ծրագիրները, ի հարկին մասնական յանձնաժողովներ, եւ լծայանձնաժողովներ և յանձնախումբեր հաստատելու գիտաւորութեամբ:

Ընդհանուր Յանձնաժողովի անդամները հինգ էին, ցամաքի, ծովի, օդային, քաղաքական և ազգային պաշտպանութեան (պատերազմական):

Յանձնաժողովը իբր հիմ իր վիճաբանութեանց ընտրեց 1930 ի Սահմանադրութիւնը, պահելով ծրագիրն ընդարձակելու և փոփոխութիւններ ներկայացնելու ազատութիւնը:

Սկիզբէն սահմանեց որ որոշողութիւններն ընդհանուր յանձնաժողովի վճիռներուն են թափուին. և հետեւեալ սկզբունքները գրաւաւ:

ա) Ազգաց Ընկերակցութեան 8րդ յօդուածին համաձայն աստիճանաբար պէտք է իրագործուէր սպառազինութիւններու նուազումը, Ազգ. Ընկերակց. ժողովին որոշողութեան վերջ.

բ) Նոյն յօդուածին համաձայն, պէտք եղած կարգադրութիւնները պիտի իրագործուէին, որոշելու համար զինամիութեան աստիճանա-

բար նուազումը՝ համաձայնեցնելով իւրաքանչիւր ազգի պէտքերուն և միջազգային յանձնառութեանց, նկատելով քաղաքային և ծովային դիրքերը:

գ) Ընդունել որակական զինամիութեան սկզբունքը. այսինքն զէնքերու որոշ դասակարգեր կամ տիպարներ՝ զորս ունենալը կամ անոնց գործածութիւնը ամբողջապէս արգիւրդի պետութեանց, կամ հասարակաց համաձայնութեամբ ընդհանրանան:

դ) Այս նպատակին հասնելու համար յանձնաժողովներ կազմել որոնք ուսումնասիրեն ցամաքի, ծովի և օդային բոլոր ուժերը, մասնաւորապէս յարձակողականները՝ որոնք աւելի սարսափելի են քաղաքային անպաշտպան ժողովրդեան համար:

Առաջարկութեանց քննութիւնները շատ դիւրին եղան մասնագէտ յանձնաժողովներուն մէջ, սակայն Ընդհանուր Յանձնաժողովին այլեւայլ պատգամաւորներու տեսութիւնները իրարու չհամաձայնեցան:

Մասնագէտ Յանձնաժողովներու կից անուանուեցան առանձին յանձնախումբեր, մասնաւոր կերպով ուսումնասիրելու համար տարրաւոր ծական և մանրէական, զէնքերու շինութեան և վաճառականութեան ու զինամիութեան գործնական և բարոյական բոլոր խնդիրները:

Ընդհ. Յանձնաժողովը քննութեան առաւ մասնագէտ Յանձնախումբերու զանազան առաջարկներն ու տեղեկատուութիւնները, արգիւրդելու համար տարրաւոր ծական նիւթերու պատերազմը, մեծ հրետանիի կիրարկութեան չափը, յարձակողական կառքերու տարողութիւնը, և օդային զէնքերու եւ սառնանակներու գործածութիւնը: Ընդհ. Յանձնաժողովին զիստաւորաբար ներկայացուած ծրագիրներն եղան Հուլիսի, Ֆրանսայի, Անգլիոյ և Իտալիոյ պատրաստածները: Յուլիս 10ին նկատի առնուեցան այս առաջարկները և քննութեան ենթարկուեցան՝ պատգամաւորներու դադարները իրարու մօտեցնելու համար:

Միեւնոյն ժողովին մէջ Գերման պատգամաւորները յայտարարեցին թէ հետագայ նիստերուն չէին կրնար մասնակցել՝ եթէ տեւրութեանց միջև հաւասարութեան իրաւունքը չընդունուէր:

Այս առաջարկը կասեցուց պատգամաւորներու գործը մինչեւ որ դարձեալ միացան Անգլիա, Դադլիա, Իտալիա, Գերմանիա, Միացեալ Նահանգներ, և համաձայնեցան իրաւունք տալով Գերմանիոյ և դաշնագիրներով զինամիութեամբ փոքր տեւրութեանց՝ որոնք իրենց ապահովութեան համար հարկ եղած միջոցները կրնային ունենալ:

ՍՊԱՌԱԶԻՆՈՒԹԵԱՆ ԴԱԴԱՐ

1931 ի Համագումարն ընդունուած սպառազինման դադարը 1932 Նոյեմբ. 1ին կը վերջանար: Ժողովը դեռ չորս ամիս ալ երկարաձգել առաջարկեց այս ժամանակամիջոցը և 51 տեւրութեանց ներկայացուցիչները իրենց հաւանութիւնը յայտնեցին:

ԲՆԼԵԿԻՐՈՑ